ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---»----------2023թ. **N ----- Ա**

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի N10-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի հոկտեմբերի 29-ի «Երևանի քաղաքապետարանի և վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմերի կառուցվածքը, հաստիքացուցակը, աշխատակիցների թվաքանակը, Երևանի քաղաքապետի, նրա տեղակալների, խորհրդականների, օգնականների, մամուլի քարտուղարի, քաղաքապետարանի աշխատակազմի աշխատակիցների, վարչական շրջանների ղեկավարների, ղեկավարների տեղակալների, վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմերի աշխատակիցների պաշտոնային դրույքաչափերը հաստատելու և Երևան քաղաքի ավագանու 2017 թվականի հունիսի 16-ի N16-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N10-Ա որոշման հավելված N2-ում կատարել հետևյալ փոփոխությունները.

1) «Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի աշխատակիցներ» գլուխը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

	Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի աշխատակիցներ				
1	աշխատակազմի քարտուղար	1	935,000		935,000
2	աշխատակազմի քարտուղարի տեղակալ	2	714,000		1,428,000
3	աշխատակազմի առանձին գործառույթների իրականացման խորհրդատու	5	207,333		1,036,665
	Ընդամենը՝	**8.0**			**3,399,665**

2) «I. Կառուցվածքային ստորաբաժանումներ» բաժնի «Ընդամենը՝ Երևանի քաղաքապետարան» տողում «690.5» և «235,510,180» թվերը փոխարինել համապատասխանաբար՝ «695.5» և «236,546,845» թվերով:

3) «Ամբողջը» տողում «1990.5» և «620,090,980» թվերը փոխարինել համապատասխանաբար՝ «1995.5» և «621,127,645» թվերով:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ,
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ ԼԵՎՈՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի N 10-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևանի քաղաքապետարանի աշխատակազմում քաղաքաշինության գործունեության ոլորտում համապատասխան ստորաբաժանումներին վերապահված լիազորություններն ու գործառույթները արդյունավետ իրականացնելու՝ փորձագիտական, տեղեկատվական-խորհրդատվական օժանդակություն ցուցաբերելու համար, Երևանի քաղաքապետարան ներկայացված հայտերն ուսումնասիրելով մասնագիտական գնահատում, հարցերի վերաբերյալ համակողմանի քննարկում և դրանց վերլուծության հիման վրա ընդհանուր կարծիքի ձևավորմամբ մասնագիտական (առաջարկ) եզրակացություն տրամադրելու նպատակով, ինչպես նաև նպաստելով քաղաքաշինական փաստաթղթերի տրամադրման գործընթացի առավել օպերատիվ և թափանցիկ իրականացման ապահովմանը, ***առաջարկվում է Երևանի քաղաքապետարանում ստեղծել աշխատակազմի առանձին գործառույթների իրականացման խորհրդատուի թվով հինգ հաստիք:***

Քաղաքաշինական գործունեությունը կանոնակարգող օրենսդրության՝ ոլորտի իրավական ակտերի համաձայն քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերը հիմք են հանդիսանում և հիմնականում դրանց միջոցով է ձևավորվում ճարտարապետահատակագծային նախագծային փաստաթղթերի մշակման համար կառուցապատողին տրամադրվող ճարտարապետահատակագծային առաջադրանքը (նախագծմանթույլտվությունը)՝ նախագծման պարտադիր պայմանները, պահանջներն ու սահմանափակումները սահմանող փաստաթուղթը:

Նախկինում հաստատված քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի կիրառության արդյունավետությունը ներկա պայմաններում բավարար չէ ծագած խնդիրների լուծման համար:

Այսուհետ անցում կատարելով փաստական տվյալների վրա հիմնված կառավարման իրականացմանը նախաձեռնվել են ռազմավարական փաստաթղթի՝ Երևանի գլխավոր հատակագծի մշակման ուղղությամբ աշխատանքներ վարելու գործընթացներ: Ընդ որում օր օրի առաջ են գալիս նոր չափանիշներ և կարիք կա ՀՀ բազային երկրատեղեկատվական համակարգի ստեղծման և ներդրման հետ կապված պահանջներին համապատասխանող ձևաչափերով կազմվող և գործող գործադրական օպերատիվ աշխատող գործիքների:

Սակայն դրանց ամբողջական, միանվագ (միաժամանակյա) իրականացումը կախված է մի շարք պայմանների՝ տեխնիկական, ֆինանսական, մասնագիտական ռեսուրսների և ժամկետների հետ:

Նկատի առնելով վերոհիշյալը, անցումային տվյալ ժամանակահատվածում, Երևան քաղաքում քաղաքաշինական գործունեության բնագավառում կառուցապատման կանոնակարգմանն ուղղված կառավարման հարցերին առնչվող համայնքի լիազորությունների մատուցման գործընթացները պատշաճ՝ բարձր որակով կազմակերպելու համար (հստակ ժամկետներով, գործելակերպի թափանցիկության, թվային ծառայությունների կիրառման, քաղաքի պլանավորման և կառավարման մեջ հասարակության /գիտակրթական, մասնավոր հատվածների համախմբված ջանքերով/ ուղղակի մասնակցության ապահովմամբ) կարիք է առաջացել բարձր որակավորում ունեցող նեղ մասնագիտական շրջանակների ներգրավման: Այս քայլը նպատակաուղղված է համայնքի առջև ծառացած և կուտակվող խնդիրներին (զարգացման նորարարական սցենարներին) համընթաց լուծումներ գտնել նաև նշված առանձին գործառույթների իրականացման խորհրդատուների մասնակցությամբ:

Առանձին գործառույթների իրականացման խորհրդատուների կողմից տարվող աշխատանքների միջոցով ապահովվելու է.

1. Երևան քաղաքի տարածքի պատմական ինքնատիպության պահպանումը, դրա պլանավորման կառուցվածքի առանձնահատկությունները, քաղաքի ճարտարապետական տեսքը և քաղաքային միջավայրը.
2. Երևան քաղաքի կայուն տնտեսական և սոցիալական զարգացումը, Երևան քաղաքի տնտեսության մրցունակության բարձրացումը, Երևան քաղաքի բնակչության բարգավաճման, տնտեսական անկախության, սոցիալական պաշտպանության համար բարենպաստ քաղաքաշինական պայմանների ստեղծումը.
3. քաղաքաշինական նորմատիվ փաստաթղթերով նախատեսված քաղաքային միջավայրի որակը և հարմարավետությունը, համալիր և համակարգված մոտեցումները կառուցապատման, ինժեներական ապահովման, տրանսպորտի և հանրային ծառայությունների, տարածքների բարեկարգման և կանաչապատման նկատմամբ.
4. սոցիալապես նշանակալի սպասարկման օբյեկտների, ենթակառուցվածքների, հանգստի գոտիների, ընդհանուր տարածքների և հանրային տարածքների մատչելիությունը բնակչության, ներառյալ հաշմանդամություն ունեցող անձանց համար:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ, **ԼԵՎՈՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի N10-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի հոկտեմբերի 29-ի N10-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի N10-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի հոկտեմբերի 29-ի N10-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում ծախսերի էական փոփոխություն չի նախատեսվում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ,
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ ԼԵՎՈՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ